ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

18 նոյեմբերի 2016թ. թիվ 265

Ա.ԳՈՐԳԻՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ
ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 163 հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի հուլիսի 27-ի թիվ 124 կարգադրությունը և հաշվի առնելով Ա.Գորգինյանի դիմումը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ե.Չարենցի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Գորգինյանին տրամադրել 2016 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մնացած մասը ս/թ դեկտեմբերի 1-ից 21-ը ներառյալ՝ 15 աշխատանքային օր:

2. Ա.Գորգինյանի արձակուրդում գտնվելու ժամանակ «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ե.Չարենցի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ե.Չարենցի անվան թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Արմինե Ղարդյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր